



Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶԿԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2018 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

ԳՏԱԿՈՂ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Բոլոր պատասխանները գրել այս քննաթերթիկի մեջ՝ համապատասխան տեղերում:

Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:

Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Լեզվամտածողություն բաժնում առաջադրանքները տրված են երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Ընտրել լեզուներից **մեկը** և պատասխանել հարցերին:

Այս փաստաթուղթը բաղկացած է 5 տպագիր և 1 դատարկ էջերից:

1. Անհրաժեշտ տեղում լրացրո՛ւ բաց թողած տառերը, երկհնչյունները:

Ուղիղ լուսամուտիս առաջ աճում, բարձանում էր մի մարդահասակ **եղևնի**: Ամեն առավոտ, երբ մոտենում էի լուսամուտիս, իմ առաջին հայացքն ընկնում էր դրա վրա, և նա ասես ժպտում էր ինձ իր կանաչ հանդերձներով, ժպտում էր մանավանդ **ձմռանը**:

-Տեսնու՞մ ես,- կարծես ասում էր նա:- Ես ցրտից չեմ վախենում:

Նայելով նրան՝ ես նույնպես ժպտում էի: Նա իսկական կտրիճ է. չի երկնչում ո՛չ քամուց, ո՛չ ձնից, ո՛չ սառնամանիքից... Ու ինձ համակում էր մի ուրախ **զգացում**:

Ահա թե ինչպիսին պետք է լինել:

Եվ ձմռան ցուրտը, բուքը սարսափելի չէին թվում ինձ:

Ինչպե՞ս է դիմանում փոքրիկ ծառը: Ոչ միայն դիմանում է. չի ընկճվում բնավ: Աշխարհին նայում է միշտ ուրախ, միշտ զվարթ... Ու փոքրիկ ծառը դառնում էր ինձ սիրելի, այնքան սիրելի, որ թվում էր հարազատ, և ուզում էի, որ նա մնա միշտ այդպես լավ ու խիզախ:

Բայց այսօր կեսօրին սովորականի պես մոտենում եմ լուսամուտիս. եղևնին չկա: Այո՛, նա՛ իմ կանաչ եղևնին, չկա... Նրա տեղում մնացել է **սղոցով** կտրած բուևը:

Ի՞նչ է պատահել... Նայում եմ իրարից հեռու տնկված եղևնիներին, նրա հասակակից, սիրունատես եղևնիներին: Նրանք կանգուն են: Ինչպես միշտ, կանաչազգեստ, կատարները խրոխտ վեր պարզած:

Իսկ իմ եղևնին: Ո՞վ է կտրել նրան և ինչու՞....

Մտածում եմ ու գտնում հանկարծ: Վաղը Նոր տարի է: Կտրել-տարել են, որ տոնածառ սարքեն: Ու միտքս գնում է կտրող-տանողի **տուն**. Ինչպե՞ս է զգում նա այդ ծառի առաջ, ծառ, որին զրկել է կյանքից՝ մի քանի օր ուրախանալու համար:

Իսկ դեռատի ծառը, որ տարին բոլոր ուրախացնում էր ամենքին, հիմա չորս պատերի մեջ մեռնում է զարդարված:

Եվ քանի՞ հազարավորներ այդպես...

5 միավոր

2. Տեքստում կան կետադրական բացթողումներ. լրացրո՛ւ դրանք:

2 միավոր

3. *Տեքստից դճրս գրիր հետևյալ բառերի հոմանիշները, գրի՛ր ևս մեկ հոմանիշ.*

քամի բուք, գեփյուռ
խիզախ կտրիճ, արի
ուրախ զվարթ, խնդուն
վախենալ երկնչել, սարսափել

2 միավոր

4. *Տեքստից դճրս գրիր տրված կաղապարներին համապատասխան երկուական բառ.*

արմատ+ վերջավորություն ցրտից, ծառը
արմատ+վերջածանց փոքրիկ, սիրելի
արմատ+հոդակապ+արմատ լուսամուտ, տոնածառ
արմատ+արմատ այսօր, կեսօր
արմատ+ ածանց + հոդակապ+արմատ սիրունատես, հասակակից

2,5 միավոր

5. *Տեքստում գտի՛ր այնպիսի բարդ բառ, որն ունենա ածականով արտահայտված արմատ: Դու՛րս գրիր այդ բառը և արմատը ընդգծի՛ր:*

կանաչազգեստ

0,5 միավոր

6. *Տեքստից դճրս գրիր 1 սուկածանցավոր բայ և կազմի՛ր այդ բայի հրամայական եղանակը, սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակածևը (բայերը գործածի՛ր եզակի թվով, դրական և ժխտական խոնարհումով):*

Սուկածանցավոր բայ բարձրանալ
հրամայական եղանակ բարձրացի՛ր, բարձրացե՛ք, մի՛ բարձրացիր, մի՛ բարձրացեք
անցյալ կատարյալ բարձրացավ, բարձրացան, չբարձրացավ, չբարձրացան

1,5 միավոր

7. *Դճրս գրիր տեքստում ընդգծված բառերը և որոշի՛ր դրանց հոլովը, հոլովումը և նախադասության մեջ շարահյուսական պաշտոնը:*

*եղևնի – ուղղական հոլով, ու հոլովում, ենթակա
ծմռանը – տրական հոլով, ան/վա հոլովում, ժամանակի պարագա
զգացում – ուղղական հոլով, ան հոլովում, ենթակա*

*սղոցով – գործիական հոլով, ի հոլովում, միջոցի խնդիր
տուն – ուղղական հոլով, ա հոլովում, տեղի պարագա*

3 միավոր

8. Տեքստից դ՛րս գրիր

ա. պարզ համառոտ մեկ նախադասություն և ընդարձակի՛ր:

Նրանք կանգուն են:

Նրանք՝ սիրունատես եղևնիները, կանգուն են:

բ. միակազմ մեկ նախադասություն:

Իսկ իմ եղևնի՞ն:

1,5 միավոր

9. Գտի՛ր և ուղղի՛ր սխալները այն նախադասություններում, որտեղ դրանք առկա են (բառագործածության, խնդրառության, համաձայնության):

- ա.** Ինձ՝ որպես բնապահպան, քչերն են ճիշտ հասկանում:
- բ.** Պետք է ծանոթանաս բնության հետ, նրա ամեն թուփ ու ծաղկի հետ, որ ճանաչես ու սիրես:
- գ.** Ինձ թվում է, թե իմ հոգատար վերաբերմունքի համար բնությունը շնորհակալություն է հայտնում ինձնից:
- դ.** Նա ինձ իր երախտիքի խոսքն է ասում գեղեցկանալով, փթթելով, օր օրի առավել ծաղկուն դառնալով:

2 միավոր

ա. համաձայնության սխալ

Ինձ՝ որպես բնապահպանի, քչերն են ճիշտ հասկանում:

բ. խնդրառության սխալ

Պետք է ծանոթանաս բնությանը, նրա ամեն թուփ ու ծաղկին, որ ճանաչես ու սիրես:

գ. խնդրառության սխալ

Ինձ թվում է, թե իմ հոգատար վերաբերմունքի համար բնությունը շնորհակալություն է հայտնում ինձ:

դ. բառագործածության սխալ

Նա ինձ իր երախտագիտության խոսքն է ասում գեղեցկանալով, փթթելով, օր օրի առավել ծաղկուն դառնալով:

Լեզվամտածողություն

1. Հակիրճ շարադրի՛ր մտքերդ Հայաստանի բնության պահպանության մասին:

3 միավոր

2. Ի՞նչ կպատմեր եղևնին հեղինակին:

3 միավոր

3. Բնութագրի՛ր եղևնուն՝ օգտագործելով տեքստում տեղ գտած բառերը:

2 միավոր

4. Ինչպիսի՞ն պետք է լինի մարդը՝ ըստ հեղինակի:

2 միավոր

5. Գրի՛ր չորս դարձվածք՝ գույների անուններով:

Սև օր, կանաչ-կարմիրը կապել, սևը սպիտակից չջուկել, վարդագույն ակնոցով նայել...

2 միավոր

ԴԱՏԱՐԿ ԷԶ